# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

# Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

4 հոկտեմբերի 2019թ. թիվ 500

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասի 3-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ. հուլիսի 7-ի թիվ 992-Ն որոշմամբ հաստատված կարգի 67 և 68 կետերը, հաշվի առնելով «Սպիտակի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենի թափուր պաշտոնի հավակնորդ Արսեն Սեմյոնի Մկրտչյանի դիմում-բողոքը՝

Կ ա ր գ ա դ ր ո ւ մ  եմ.

1. Արսեն Սեմյոնի Մկրտչյանի դիմում-բողոքի հիման վրա «Սպիտակի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար 2019 թվականի հոկտեմբերի 3-ին ժ. $11^{00}$-ին կայացած մրցույթի արդյունքները քննարկելու նպատակով ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնաժողովին՝

5-օրյա ժամկետում ավարտել քննարկումը և արդյունքների մասին ներկայացնել եզրակացություն:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Invalid signature

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2019թ. հոկտեմբերի 4
ք. Վանաձոր